

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԳ.

14 ՆՈՅԵՄԲԵՐ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Շ Գուճ-Գաբու, Պատրիարքարան փողոց Շ

**ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ**

**ՄԱՅՐ ԴԻԻԱՆ**

Յ. Մերեւէմ-Գուլի էֆէնտի	Ա. Ապեւապե
Աւաքեղ էֆէնտի Ալթուն Տիւրրի	Բ. »
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Ապեւապե
Միհրան էֆէնտի Չօպանեան	Բ. »

**Ձեռնաստրեան դիւան**

Տ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան  
Հովհաննէս Բահանայ Մկրեան  
Պապի էֆէնտի Պապօեան

**Իաստիակութեան դիւան**

Յարութիւն էֆէնտի Թիւլեան  
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան  
Տօքթոս Ռափաէլեան էֆէնտի

**Կայուածոց դիւան**

Աւետիս էֆէնտի Կիրտաղեան  
Բարսեղ էֆէնտի Հալաճեան  
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան

**Համարակարութեան դիւան**

Յակոբ էֆէնտի Արշակ  
Պօղոս էֆէնտի Թորգոմեան

**Յարաբերութեան դիւան**

Գարեգին էֆէնտի Մելիքեան  
Միհրան էֆէնտի Չօպանեան  
Նշան էֆէնտի Օտեան

**Իրաստրեան դիւան**

Տ. Ներսէս վարդապետ Աօլանեան  
Տելեմար էֆէնտի Էքսէրճեան  
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան

**Նախաձեռնութեան դիւան**

Տիգրան էֆէնտի Եռասուֆեան  
Ղազար էֆէնտի Հովուեան

**Խմբագրութեան դիւան**

Կարապետ էֆ. Խթիւճեան  
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան  
Աբրահամ էֆէնտի Մուրատեան

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄՅ


**Ն Ի Ս Տ Ժ Գ.**

14 ՆՈՅՄԲԵՐ 1880

ՆՈՒՍԳԱՀ. — Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան (Աժամեայ կարգեալ)  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Յ. Մերեւէմ-Գուլի էֆէնտի

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	ՍՏԽՍՐՀԱՆՔ (Ա. Վ. իճակ)	ԳՆԱՄՈՒՄ, ԿԵՍԻԿ ՎԱՂԱ ԵՎ ԳՆԱՄՈՒՄԻ ՂՈՒՐԱ	ԻՆՍԿՐՄԱՐ Ս. ԿԱՐԱՊԵՏ
Ա. Վ. իճակ	ԳՆԱՄՈՒՄ, ԿԵՍԻԿ ՎԱՂԱ ԵՎ ԳՆԱՄՈՒՄԻ ՂՈՒՐԱ		
1 Կարապետ Եպ. Սերոբեան	21 Գրիգոր Պէրպէրեան	Բ. 3	47 Յ. Շիշմանեան Տօքթօր Բ. 9
2 Սիմօն Եպ. Սէֆէրեան	22 Գէորգ Ստիմարաճեան	Բ. 3	49 Միհրան Պահճէգափուլ
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան	23		50 Պօղոս Թորգոմեան
4 Կարապետ Բ. Սէթեան	24 Կարապետ Աղարղմաճեան		51 Նիկողոս Արաճաճեան
	25 Համբարձում Մաղպուլեան		52 Տրդատ Փափաղեան
Բ. Վ. իճակ	26 Մինաս Գափամաճեան		(Գ. Վ. իճակ)
5 Մատթէոս Եպ. Իզմիրլեան	27		Գաւրմ բաղա
6 Պօղոս Վ. Խօլտամեան	28 Սարգիս Աղաբէկեան	Բ. 9	53 Գասպար Զէրազ
7 Յովհաննէս Ք. Մկրեան	29		Բեքա
8 Գրիգոր » Աճէմեան	30 Սենեքերիմ Մանուկեան		54 Աբիկ Ունճեան
	31 Բարթոլոմէոս Քիւրքճիւղաչեան		55 Գրիգոր Սէլիմիճեան
Գ. Վ. իճակ	32		56 Գրիգոր Օտեան
9 Յակոբ » Ա. Փափաղեան	33 Գէորգ Ապտուլաչեան		57
10 Սահակ Ք. Տ. Սարգսեան	34 Յ. Մերեւէմ-Գուլի		58
11 Խորէն » Փէշիվանեան	35		59 Միքայէլ Մօմճեան
12	36		60
	37		61
13			62
14 Սուքիաս Ք. Ստեփանեան	(Բ. Վ. իճակ)		Միջագիւղ
15	Պէշիկբաղ		63 Յակոբ Նորատուհկեան
16	38		64 Տիգրան Եռասուֆեան
	39 Ալիքսան Խօրասանճեան	Բ. 13	65 Մկրտիչ Գազանճեան
Ե. Վ. իճակ	40 Բարսեղ Հալաճեան	Բ.	66 Նշան Օտեան
17 Խորէն Արքե. Նար Պէշ	ԵԵՆԻՊԱՐՈՒ		67
18 Յովհաննէս Վ. Փափաղեան	41 Մկրտիչ Քիւրքճիւղաչեան		Պէշգօզ ԵՎ Ղալափա
19 Գարեգին » Թաթարեան	42		68 Միքայէլ Մամիկոնեան
20	43 Մարուգէ Յրէնկեան		(Գ. Վ. իճակ)
	44 Պօղոս Էքսէրճեան		Քուզկուճուր ԵՎ Իճատի
Բ. Բացկայութիւն առաջին	ԻՆՍԿՐՄԱՐ Ս. ԽԱՅ		
Բ. 2 Բացկայութիւն երկրորդ	45 Սիմօն Յէլէկեան	Բ. 3	69 Յովհաննէս Խաւեան
Բ. 9 Բացկայութիւն երրորդ	46		70 Ստեփան Պէշիվանեան



Գատըզիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԹԻՆՔ	Մուշ
71		421 Սահիան փափաղեան
72 Մկրտիչ Մուրատեան	Կարին	Տիվրիկ
Նարըզաբու	101	422 Նշան Գարադաշ
73 Յակոբ Եէմէնիճեան Բ	Քեօբանէա	Զեյրուհ եւ Մարաշ
Եհնիմահալլէ Սամաբիոյ	102	423
74	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգափու	103 Վիչէն Ապտուլաճ Բ	
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկոմիդիա	424 Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա եւ Ս. Աստուածածին	104 Կարապետ Ս. Իւթիւճեան Ակն	425 Մելքօն Իսկէնտէրեան
76 Գարեգին Յ. Մէլիքեան Բ	105	Տիգրանակերտ
Գուրուբէշմէ	Ղարափսար	426 Միհրան Զօպանեան
77 Ասափա Իկիտպաշեան Բ 2	106	Վան
Հիսար եւ Պօյաճի զիւղ	Արաբկիր	427
78	107 Կարապետ Խաչիկեան	Աղբամար
Նոր զիւղ եւ Սրեհիա	Բաղեշ	428
9 Ղազար Հովուեան Բ	108	Հալեպ եւ Այնթապ
Պալատ	Պրուսա	429
80	109 Քրիստոստուր Ղազարոսեան	Սեբաստիա
81 Տելեմաք Էքսէրճեան Բ	Եւզոկիա	430 Մկրտիչ Յ. Մէլիքեան
82	Ամասիա	Թուսճուզ
Քարակեօմրիկ	411 Համբարձում Ալանճան	431
83 Սեպուհ Թիւրապեան	Բալու	Կարս
84	412 Յովհաննէս Ազնաւորեան	432 Աբրահամ Յ. Այվազեան
( Ե. Վիճակ )	Եղեսիա	Զմիլիամազ
Սամաբիա	413 Յակոբ Իւթիւճեան	433 Համբարձում Սարըբէշիճեան
85 Ալիքսան Պէլիբեան	Մանճըլլիս	Գաղատիա
86 Եղիազար Մէլիքեան Բ	414	434 Ատանա
87 Մինաս Ճաֆճաֆեան	Հանըն	435
88 Նազարէթ Շահպաղեան	Երզնկա	Սդերդ
89 Յարութիւն Թիւլեան	415	436 Մատթէոս Ալէքսանեան
90 Յակոբ Արշակ Բ	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ 3	Եօզղատ
91 Սեպուհ Թիւսիւղեան	Թեքիրտաղ	437 Լօղօֆէթ Պալեօզեան Բ Պ
92	417 Տիգրան Գ. Սինանեան	Մալաբիա
93	Կեսարիա	438 Գէորդ Վարդանեան Բ
64	118 Գէորդ Գըլրճճեան Բ	Իզմիր
Խասգիւղ	119	439 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրքի	Պալքեքր	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէլիկճեան	120	440 Աբրահամ Մուրատեան
97		
98		
99 Սարգիս Քափուճեան Բ Պ		
400 Աթանազիոս Արապեան Բ 2		

# Օ Ր Ե Կ Ե Ր Գ

- Ա. Ընտրութիւն Երևոական Յանձնախմբին .
- Բ. Ընտրութիւն Կրօնային և Քաղաքային ատենից .
- Գ. Խնդիր Հիսար և Պօյաճի—Գիւղ միացեալ թաղից երեսփոխանական ընտրութեան : — Տեղեկագիր Նախաձեռնութեան դիւանի .
- Դ. Առաջարկութիւն Ս. Փափաղեան Էֆէնտիի ի մասին Ազգային դատարանաց . — Տեղեկագիր Նախաձեռնութեան դիւանի .

## ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենը կը բացուի ժամը 8 ին ընդ առժամեայ Նախագահութեամբ Տ. Սիմէօն Եպիսկոպոսի Աէֆէրեան եւ Ատենապետութեամբ Յ. Մէրեթմ-Գուլի Էֆէնտիի, ի ներկայութեան 35 երեսփոխանաց, որոց թիւն ի վերջէ կը յանդի 58 ի .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Երես 190 . Ա. սիւնակ . «Թուսինեան Էֆէնտիի խմբագրած Կանոնագրին լեզուն սրբագրելու առթիւ ըսած խօսքերս պէտք չէ այնպէս ըմբռնուին թէ երբէք ներքին Կանոնագրին չըվերաքննենք. այլ ի՞նչ անոր լեզուն սրբագրելու միտում չունենանք . քանզի կրնայ ժողովն՝ երբ եւ կամի, զայն վերաքննել, եւ բնականաբար լեզուն ալ այն ատեն կը փոխուի » :

Վաւերացում նախընթաց Թ. Նիստի ատենագրութեան .

Երես 195 . Բ. սիւնակ . «Այդ նոր վարչութիւնը կը ջնջէ՞ մեր համարատուութեան իրաւունքը՞ խօսքին մէջ համարատուութեան բառը համարատուութեան պիտի ըլլայ : Նոյնպէս պիտի ըլլայ հետեւեալ 196 երեսին նոյն խօսքիս շարունակութեանը մէջ » :

Ատենապետ Էֆէնտին յայտարարելով որ Նախընթաց նիստերէն Թ. նիստին ատենագրութիւնը միայն պատրաստ է վաւերացման համար, հրաւիրեց զերեսփոխաններն որ զլուտողութիւն՝ եթէ ունին՝ ընեն նոյն ատենագրութեան վրայ .

Տ. ՅԱԿՈՒ Վ. ՓԱՓԱՋԵԱՆ. — Ինձ համար 4 բացակայութիւն նշանակուած է, մինչդեռ 2 էն աւելի բացակայութիւն չեմ ունեցած, ուստի կը խնդրեմ որ ուղղուի :

Աւրիշ գիտողութիւն տեղի չունենալով, Ատենապետ էֆէնտին քուէի կենթարկէ Թ. Նիտարի ատենադրութիւնը եւ ժողովը եղած գիտողութեամբ հանդերձ ընդունելով դայն կը Վ.Ա.Ի.Ե.Բ.Է.:

2.

Բացակայութիւն

Ատենապետ էֆէնտի ծանուցանելով որ երեսփոխաններէն Ս. Խօրասանճեան էֆէնտի տկարութեան պատճառաւ բացակայ լինելը գրով յայտնած է, իբր օրինաւոր բացակայ նշանակել կուտայ ներկայութեան տուժարին մէջ:

3

Հրածարականք

Յետագայ երեսփոխանները՝

Տ. Վրթանէս քահանայ Պալեան

Սահակ էֆէնտի Ապրօ

Սեպուհ » Մազաուտ

Կարապետ » Քաղազեան

Եւ տօքթէօք Ռաֆայէլեան էֆէնտի գրով հրածարականներն ուզարկած ըլլալով, Ատենապետ էֆէնտին դանոնք ժողովին ներկայելէ եւ մի առ մի կարդալէ ետեւ, իբր պարզ հրածարական քուէի կ'ենթարկէ հետզհետէ, եւ ժողովը միաձայն կը Ն.Ի.Բ.Է.Բ. անոնց հրածարականները:

Ատենապետ էֆէնտին Նոյնպէս ժողովին կը ներկայէ Հարածեան Բարսեղ էֆէնտի հրածարականը կալուածոց դիւանի անդամակցութենէն, եւ երբ խօսք ուզող չը գտնուիր, քուէի կենթարկէ նոյն հրածարականն ալ, զոր ժողովը կը Ն.Ի.Բ.Է.Բ. միաձայնութեամբ:

4.

Առաջարկութիւն Ս. Փափագեան Էֆէնտի:

Երեսփոխան Ս. Փափագեան էֆէնտի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկութիւնը կը կարգացուի:

Ազգային Ժողովը Մարտ ամսոյ մէջ որոշեց դաւաճական վարչութիւններէն և Ս. առաջնորդներէն պահանջել որ բարենորոգմանց Յանձնախմբի մէկ շրջաբերակներն վրայ դաստիարակութեան մասին եղած աշխատութեան տեղեկագիրը մատուցանեն առ Ազգային Ժողով: Մինչև ցարդ ամենամեծ մասէն անպատասխանի մնացած ըլլալով, կ'առաջարկեմ՝ վերջոյն յանձնարարել վարչութեան որ ըստիպողաբար հրաւիրէ դաւաճական վարչութիւններն և Ս. առաջնորդները պատասխանել նոյն պահանջմանց մասին, և մինչեւ յառաջիկայ Յունվար ամսոյ վերջ հասնել առ Ազգային Ժողով: Նոյն թուականէն յետոյ չարատասխանող դաւաճական վարչութիւնք և Ս. Առաջնորդք իբրեւ զանցառու՝ պատասխանատու մընան Ազգային Ժողովոյ առջեւ, որ այդմասին պարտ ու պատշաճ անօրէնութիւնն ընելով՝ գործադրութիւնը յանձնէ վարչութեան:

Ազգային Երեսփոխան

Ս. Պ. Պ. Փափագեան

14 Յոյեմբեր 1880

(Յետ ընթերցման)

Այս առաջարկութեան վրայ խօսք ուղղող չըլլալով, Ատենապետ էֆէնտին առ վարչութիւն յղուած քուէի կը դնէ եւ ժողովը

միաձայն կը Ն.Ի.Բ.Է.Բ. յղել վարչութեան փափագեան էֆէնտի առաջարկն ի գործադրութիւն:

5.

Հարցապնդում Ս. Փափագեան Էֆէնտի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ս. Փափագեան էֆէնտի կողմէ Զարցապնդում մը կայ, որ բաւական երկար ըլլալուն համար կաղաչեմ որ ինքն հաճի կարգալ:

Փափագեան էֆէնտին բեմն երթալով կը կարդայ հետեւեալը:

Ուսումնական խորհրդոյ հրատարակած մասնակի համարատուութեան Սպիտակ տետրին 8-րդ երեսին Բ. սիւնակին մէջ կարգացի հետեւեալը:

«Մայիս 4-ին պատ. խորհուրդի պաշտօն յանձնած էր ինձ Եզնիկ էֆէնտի ընկերակցութեամբ ներկայանալ Քաղաքական Ժողովոյ և տարւոյս ազրիւ 3 թուական պաշտօնագրով խորհրդոյ խնդրուած 2500 դրուչի վճարման մասին սնույդ տեղեկութիւն մը առնուլ: Քաղաքական Ժողովոյ անդամք նոյն օրը բերանացի յայտնեցին թէ իրենց կողմէն Ոստանատան խորհրդին և Ազգային ընդհանուր Ժողովին գրաստան մասնակցելու պարտաւարկութիւն և ինչ անպահանջ վիճակը շարքի մը ապաք չլայ որ ամբողջ 2500 դրամաւոր պատրաստութեան համար վճարէ. իրենց յիշեցուցի 3 անգրիւ թուականաւ մեղի գրածնին, մերտ 31-ին Ելեւմտից հոգաբարձութեան և Տնտեսական խորհրդոյ գրածնին, նոյնպէս և Ընդհանուր Ժողովոյ գրածնին, որոց ամենքն

ալ մէկ միտք կը պարունակեն, այսինքն «Ազգային սնտուկին վիճակն նկատողութեան առնելով, որոշած են ամեն վրձարումներէ առաջ Ուսումնական խորհրդոյ հրամանին մայիս ամսէն սկսեալ ամսական 2500 դրուչ անխափան վճարել»: Այս փաստերուն ի պատասխանի ըսին թէ՛ Պէյլիկճեան Ստեփան էֆէնտին մեղի հաւատացուց որ սնտուկը 2500 դրուչ կրնայ տալ, մենք ալ վստահանալով անոր խօսքին սրտումնիս տուինք. յետոյ տեսանք որ չկրնար տալ եղեր ևն»:

Ս. Ելիկիսի

Արդ կը հարցապնդեմ Ս. Պատրիարք Հայրը. ստուգելու Քաղաքական Ժողովը յայտարարած է թէ Ազգային Ժողովին դրուած նամակներն սխաղանաց հետեւանքներ են և թէ սնտուկին վիճակը շատ զէշ է ու ստակ չիկայ որ ամիսն 2500 դրուչ ալ դաստիարակութեան համար վճարէ:

Ինչոք որպէս զի այս հարցապնդման իրաւունք ունենալս հաստատեմ, կանխաւ կը ներկայեմ հետեւեալ յայտարարութիւններն, զորս Սրբազան Պատրիարք Հայրն ըրած է յատենի Ազգային Ժողովոյ՝ իր Պատրիարքութեան առաջին թրուականէն ի վեր:

1874 մայիս 8-ին երբ Տէր Ներսէս Սրբազան Պատրիարք հրաւիրեալ էր իր ուխտը կատարել, ատենաբանութիւն մ'ըրաւ, յորում ըսաւ.

«Դաստիարակներ մեր մանկունքն և ջանանք որ մեր ազգային հին համբաւն անաղարտ մնայ... կրթեմք մեր զաւակները Աստուածապաշտութեան և ուսմանց մէջ... թող զրկուի ամեն ի-

բաւունքներէ այն մարդը՝ որ զաւակներ ունի և զանոնք դպրոց չի զրկեր, դպրոց ունի և հոգ չտանիր անոր» :

1874 դեկտ. 6 նիստին մէջ Մուրատեան վարժարանի խնդրոյն առթիւ Նորին սրբազնութիւնն ըսած է .

« Հայաստանի այլ եւ այլ կողմերէն շատ մը ուսումնասանչ պատանիներ ինձ կը դիմեն գիշերօթիկ վարժարանի մը մէջ կրթութիւն համար . բայց հոս ազգային զիշերօթիկ վարժարան հազիւ մէկ կամ երկու հատ կան, անոնք ալ 10 էն կամ 13 էն աւելի ձրի աշակերտ չեն կրնար առնել . ինձ դիմող խեղճ տղայոց փափաքը չկրնալով կատարել շատ անգամ ես ալ անոնց հետ կտրտասուեմ » :

Տարի մը յետոյ, 1875 մայիս 2, Ազգային ժողովոյ բացման նախագահական ճառին մէջ Նորին սրբազնութիւնն ըսած է .

« Ուսումը տարածելու մեծամեծ ջանքեր ընելու եմք . զի տակաւին տգիտութիւնը իւր անբաժանելի ընկեր թըշուառութեամբ մեծամեծ նախճիրներ կը գործէ շատ տեղեր և գրեթէ ամեն տեղ ազգային դաստիարակութիւնը իւր խանձարրոց մէջն է տակաւին, թէեւ ուսումնարաններ ունիմք :

« Չեր երկրորդ և յոյժ կարեւորագոյն և մահու և կենաց խնդիրն ազգային դաստիարակութիւնն է . Սահմանադրութեան բարեքն պէտք է վաղեցնել թողական վարժարաններն և անոնց մատակարարութիւններն բարւոքելով, պիտոճէն ընդարձակելով, կեդրոնական վարժարան հաստատելով, ուսմանց ծրագիրներն կատարելագործելով, և գաղափարները միացնելու համար դաս-

տիարակութիւնը միակերպելով, նոր երկսեռ նախակրթարաններ, նոր երկրորդական վարժարաններ բազմացունելով . զի այդ դպրոցներն պիտի բուսցունեն մեզ բարեկիրթ ծնելասէր մայրեր, եկեղեցւոյ արժանաւորագոյն պաշտօնեայներ, ազգային ժողովոց արթուն և ազգասէր անդամակիցներ, և լուսամաս, գործունեայ և պատուական և իւր գործը շինելու կարող ժողովուրդ . Երբ այսպէս բարեկարգ դպրոցներ, բարեկարգ վանքեր, վարժապետանոցներ, արհեստանոցներ և այլն ունենանք, երբ ազգային և Տէրութեան պիտանի քաղաքացիներ ս'լսին ելնել մեր դպրոցներէն, այն ատեն Սահմանադրութիւնը մեռեալ տառ մը չմնալով իւր արդիւնքը ցըցուցած, և Տէրութեան և ազգին մէկ խիստ պատուական օրինագիրքն եղած կըլլայ և Չեր անունն ալ ապագայ սերունդէն օրհնուելով կօրհնուի, ոսկեղէն տառերով դրոշմուելով մեր պատմութեան մէջ » :

Ասկէ երկու տարի յետոյ, 1877 մայիս 6, Ազգային ժողովոյ բացման նախագահական ճառին մէջ Նորին սրբազնութիւնն ըսած է .

« Բովանդակ այս խնդիրներով (Հարստահարութեանց և Պօլսոյ դեսպանաժողովոյ խնդիրներն ակնարկելով) պատաղեալ, չկարացի ազգային դաստիարակութեան վրայ ունեցած սէրս գործով և արդեամբ ցուցունել, Ես որ կարողացած էի ինձ հետ աջակից գտնուող ազգասէր անձանց հետ մինչեւ այն ատեն նմանը մեր ազգին մէջ չերեւցած դպրոց մը կանգնել . . . Առաքել Նուպար—Շահնազարեան վարժարանը, ա-

ւա՛ղ, ժամանակիս տազնապալից նեղութեան պատճառաւ դոցուեցաւ . . . Միւս կողմանէ Ազգային Վարչութեան և Ուսումնական խորհրդոյ ջանիւքը կեդրոնական վարժարանը շինուեցաւ, շնորհակալութիւն տիւ և գիշեր անձնուիրաբար աշխատողաց, շնորհակալութիւն փոխատու անձանց . սակայն ինչպէս ամենուս ալ բաղձանքն է, ըստ որում այն վարժարանը պարտքով շինուեցաւ, պիտի ջանանք մէկ կողմէն պարտքերը վճարելով միւս կողմանէ բանալ զայն ժամանակ չանցուցած :

« Այսօր մեր ամենէն կարևոր և անհրաժեշտ եղող մահու և կենաց խնդիրը դաստիարակութեան խնդիրն է . ձեր մէջէն իսկ ճառեր խօսող եղաւ այս մասին . ուրեմն ամեն ճիգ թափենք ազգային դաստիարակութիւնն յառաջ տանելու համար : Մինչև ցարդ ի չգոյէ տարերաց և նպաստից՝ դիւցազնական ջանքերով զոհողութիւններ ըրած ենք . նոյն ժողովուրդն ենք դարձեալ, պէտք է նոյն ջանքերնիս շարունակենք և կրկնապատկենք դաստիարակութեան համար, որ Ազգին վերակենդանութեան միակ միջոցն է » :

Ասկէ ալ տարի մը յետոյ, 1878 յուլիս 2, Ազգային ժողովոյ բացման նախագահական ճառին մէջ Ն. Սրբազնութիւնն ըսած է .

« Կրթութիւնը տարածել, դպրոցներ՝ բայց ազէկ դպրոցներ շինել, այս է մեր ամենէն նուիրական պարտքը, առէ խարխիս փրկութեան ամենայն ժողովրդոց » :

« Մեր դպրոցներն քիչ են, անբաւական են, աշխատիմք շատցնելու, ամենքս ալ աշխատինք . կը յուսամ որ այսօր հանդի-

սաւոր ուխտ կընէք այս բանին, կը յուսամ որ արդէն ունեցած դպրոցնիս ծաղկեցնելու փոյթ կը տանիք . . . կը յուսամ որ ընկերութիւն մը կը կազմէք և կը բանաք Նուպար—Շահնազարեան վարժարանը . . . կը յուսամ որ ընկերութիւն մը կը կազմէք և կեդրոնական վարժարանն ալ իւր նպատակին յարմար գիրքին մէջ կը վերածէք փութով » :

Վերջապէս այս թուականէն ալ տարի ու կէս յետոյ 1879 նոյեմբեր 2, Քաղժողովու Ուսում. խորհրդոյ ի մասին կեդր. վարժարանի պատրաստած ծրագիրն բերած ըլլալով Ազգային ժողովին, Ս. Պատրիարք Հայրն հետեւեալ խօսքերն ըրաւ .

« Ինչ որ թեր ու դէմ խօսուեցաւ խընդրոյն վրայ, մտիկ ըրի վիճարանութեան սկիզբէն, այս առաջին անգամը չէ որ կեդր. վարժարանի խնդիրը կը յուզուի եւ վիճարանութեան նիւթ կըլլայ, բայց դեռ չկրցաւ իրանալ մարմնաւորել այն խորհուրդն, որու կարևորութիւնն ամենքը կը դուռնին և կը հաստատեն : Չիս ճանչցողները գիտեն որ տեսականէն աւելի գործնականին կը հետեւիմ, եւ այսօրուան գործը վաղուան թողուլ չեմ ուզեր : Հերիք այսքան ժամանակի կորուստ, այլ ես գործել պէտք է, կրթութեան խնդրոյն մէջ մանաւանդ վարանումներն և յետաձգումներն անդարմանելի կորուստներ կը ծնին, ինչ օգտակար խորհուրդներ որ ունիք այս մասին՝ շիտով կընդունիմ, և կօրհնեմ զձեզ որ լաւագունին կը բաղձաք, բայց այս անգամ որ Ուսում. խորհրդոյ ծրագիրը Վարչութեան հետ ընդունեցինք, ուրիշ նպատակաւ չէր, այլ գործադրութեան սկիզբ մը տարու, փորձ մ'ընելու համար էր միայն . վասն զի միշտ փորձն

իմաստուն առաջնորդ է ամեն գործի մէջ։ Թողէք ուրեմն որ Աւս. խորհուրդն՝ որ բարեյօժար տրամադրութիւններ ցոյց կը տայ, և գործելու եռանդ ունի, փորձ մ'ընէ, թողէք որ իւր ծրագիրն գործադրելու աշխատի . . . Ինչ օգուտ կրնան ունենալ հազարաւոր դպրոցներ, երբ ուսուցիչներ եւ դաստիարակներ կը պակսին. այս մեծ պսկասը լրացնելու սահմանուած է ահաւասիկ կեդրոնական վարժարանը. ուստի ամեն բանէ աւելի անոր հաստատութեան պէտք է հոգ տանիք, առաջին գործադրելի խնդիրն այս է : »

Հետեւաբար Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ խնդիրք, և ժողովն ըստ առաջարկութեան Ամեն. Սրբազան Նախագահ Հօր կորոչէ ստուար մեծամասնութեամբ՝ կեդրոնական վարժարանի խնդիրն՝ իրր վարչական խնդիր՝ վերագարձնել վարչութեան Ի Գործադրութիւն։

Սոյն թուականէն ասդին մինչև ներկայ տարւոյ մայիս 4 անցած եղելութիւնները կը պատկերէ մեր աշաց առջև Աւս. խորհրդոյ հրատարակած նամակի համարատուութեան տեարը, առ խորհրդածութիւնն յաւելցնելով։

«Ուսում. խորհուրդս կը ցուի որ կեդրոնական վարժարանի բացման համար իւր ձեռնարկած այնչափ բանակցութիւնք եւ քրտնաթոր աշխատութիւնք բաղձացեալ արդիւնքը չեն կրցած արտադրել, իւր կարողութիւնէն դուրս պարագաներու և ազդեցութիւններու, ինչպէս նաև պէտք եղած միջոցներու և ձեռնտուութեանց պակասութեան պատճառներով, որոց պատասխանատուութիւնն իրեն չվերաբերիր երբէք»։

Ո՛վ է ուրեմն պատասխանատուն.

ահա ես զայդ կը վնասեմ և այս պատճառաւ հարցապնդում կընեմ առ Ս. Պատրիարք Հայր ոչ դայ երևի պատասխանատուն, և Ազգային ժողովը ճանչնայ զանի :

Ես չեմ ուզեր քննադատել Սրբազան Պատրիարք Հօր իր Պատրիարքութեան Աթուականէն սկսեալ մինչև 1879 նոյեմ. 2 թուականն ըրած յայտարարութիւնները, զորս աստ ամիփեցի. սակայն կը յիշեցնեմ նորին Սրբազնութեան թէ ինք կը փախարի ազատի պատմութեան առջև պատասխանատուութենէ, ինչպէս որ 1876 փետրուար 20ի նիստին մէջ Մուրատեան վարժարանի խնդրոյն առթիւ ըսած է « Ես անոր համար այս խնդիրն ալ յիշեցուցի, որպէս զի ապագային մէջ պատմութիւնը չպարսաւէ զիս թէ ազգին համար մեծ շահ ունեցող այսպիսի խնդիր մը իմ օրովս չեմ պաշտպանած»։

Նոյնը կրկնած է նոյն խնդրոյն համար նաև 1877 յուլիս 2 թ նիստին թէ. «Ըսի այն ատեն թէ ապագան զմեզ պիտի դատապարտէ եթէ անհոգ և անփոյթ գտնուիմք յայսմ մասին. ես իմ կարգիս՝ ապագային դատապարտութենէն ազատ մնալու համար ուզեցի ընել եւ ըրի ինչ որ պարտքս էր»։

Արդ եկող գնացող Ուսում. խորհուրդք առ հասարակ ուշի ուշով քննելով Դատարարակութեան խնդիրն ու անոր պիտոյքները, հետեւեալ սոսկալի վճիռը տուած են.

«Կանոնաւոր դատարարակութիւնը եւ իրական յառաջդիմութիւնը դրամի կը կարօտին, և ամենայն ինչ գրամախ կատարելագործութիւն. դատարարակութեան համար դրամ զլանալը յառաջադիմութեան

եան խոչընդոտ յարուցանել է, և յառաջադիմութեան դիմադրելը յայտնապէս ազգն ի կործանումն մղել է»։

Ուսում. խորհրդոյ համարատուութիւնը կը յայտարարէ թէ Ազգային ժողովով որոշեալ և Ս. Պատրիարքէն հրամայեալ դրամը չվճարուեցաւ. ո՛վ է պատասխանատու. կը յուսամ որ Ներսէս Սրբազան ապագային դատապարտութենէն այս մասին ևս ինքզինքը ազատելու համար կը ցուցնէ մեզ բուն պատասխանատուն և ազգին կործանման անփոյթ գըտնուողն :

Ներսէս Սրբազանի վեց տարուան Պատրիարքութեան միջոցին կեդրոնական սնտուկն 30,000 ոսկի մտած է, 34,500 ոսկի ալ վսեմ. Աբրահամ փաշայէն և Սարգիս պէյէն նուիրեալ, ընդ ամենը 34,500 ոսկի. արդ այս ահագին գումարէն դանկ մ'անգամ չէ վճարուած դատարարակութեան համար, որ ազգին կենաց և մահու խնդիրն է և ազգին վերակենդանութեան միակ միջոցն է ըստ յայտարարութեան Ն. Սրբազնութեան : Այս վիճակն անհանդուրժելի է. բայց կը համբերեմ տակաւին լսել Ն. Սրբազնութիւնը. քանզի Ն. Սրբազնութիւնն աւելի գործել կուզէ քան թէ խօսիլ. ինչպէս իրաւամբ յայտարարած է 1873 յուլիս 6 ի նիստին մէջ թէ. « Ազգն ու ժողովը գործ կը պահանջեն ինէ և ոչ խօսք»։

14 Նոյ. 1880 Ազգ. Երեսմիութեան Ս. Պ. Պ. Փախալեան


( Յետ ընթերցման )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք Փախաղեան էֆէնտի հարցապնդումը, զոր կառաջարկէ յղել առ Ս. Պատրիարքն, եթէ խօսք ուզող

չկայ, առաջարկեալ յղումը քուէի պիտի դրնեմ :

Ոչ ոք խօսք կառնու եւ Ատենապետ էֆէնտին քուէի ենթարկելով հարցապնդումը, ժողովը միաձայն կը ՆԴՈՒՆԻ եւ ԿՈՐՈՇԷ յղել զայն առ Ս. Պատրիարքն :

**ՕՐԱԿԱՐԳ**



Ընտրութիւն Երևուական Յանձնախմբի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութիւնք սպառեցան, արդ օրակարգին կանցնինք, որոյ առաջին խնդիրն է ընտրութիւն Երևուական յանձնախմբի :

Սոյն յանձնախմբին համար դիւանն երեք ընտրելի կ'առաջարկէ ժողովին հաւանութեան, որք են՝

- Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան
- Մկրտիչ » Մէլիքեան
- Միհրան » Զօպանեան

Գիտողութիւն ընող չըլլալով՝ Ատենապետ էֆէնտին սոյն ցուցակը քուէի կ'ենթարկէ, եւ ժողովն ընդունելով զայն, Երևուական Յանձնախմբի անդամ կը ՀՈՒՉԱԿԷ յիշեալ երեք անձինքը :

Բ.

Ընտրութիւն Կրօնային և Քաղաքային ատենից

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգին երկրորդ խնդիրն է ընտրութիւն Կրօնային և Քաղաքային ատենից. Կրօնային ատենի համար ան-

ցեալ անգամ Եկեղեցական Արձակային ժողովին պատրաստեալ եռապատիկ ընտրելեաց ցանկը ներկայեցի ձեզ, որ Ատենապետաց զիւանին յանձնուեցաւ անոր մէջէն 5 հոգւոյ ցանկ մը բերելու համար: Աւասիկ Ատենապետաց զիւանին պատրաստած ցանկն, որ սրբագրելի է եւ որոյ մէջէն կրնաք ուղածնիդ գծել եւ տեղն ուրիշ մը դնել Եկեղեցական Արձակային ժողովին եռապատիկ ցանկէն:

Չայս ըսելով Ատենապետ էֆէնտին կը կարգայ յետագայ ցանկը:

- Տ. Կարապետ եպօ. Սերովբեան
- « Գարեգին վրդ. Թաթարեան
- « Յակոբ « Փափաղեան
- « Յովհաննէս քհնյ. Հիւնքեարայէյէնտեան
- « Սահակ « Տէր Սարգսեան

Նոյնպէս կը կարգայ Եկեղեցական Արձակային ժողովին եռապատիկ ցանկն ալ, (Տես ժԲ. ատենագրութեան երես 323) եւ կը հրաւիրէ զերեսփոխաններն ի քուէարկութիւն:

Անմիջապէս քուէարկութիւնը կսկսի եւ քուէհամարի համար քննիչ կորոշուին վիճակաւ:

- Տ. Կարապետ եպօ. Սերովբեան
- Կարապետ էֆէնտի Իթիւճեան
- Համբարձում « Մաղսուլեան
- Մատթէոս « Ալիքսանեան

Քուէհամարը կատարուելով յետագայ արդիւնքը կը գոյանայ:

Թիւ քուէարկուաց 50

- Տ. Կարապետ եպօ. Սերովբեան քուէ 37
- « Գարեգին վրդ. Թաթարեան « 42
- « Յակոբ « Փափաղեան « 33
- « Յովհաննէս քհնյ. Հիւնքեարայէյէնտեան 43
- « Սահակ « Տէր Սարգսեան 39

Ատենապետ էֆէնտին սոյն արդիւնքը ժողովին ներկայելով, ընտրութեան ամբողջութիւնը քուէի կը դնէ, զոր ժողովն ընտրեց:

ԳՈՒՆԵԼՈՎ, վերոյիշեալ Եկեղեցական Հարք Կրօնային ատենի անգամ կը ՀՌՁԱԿՈՒՆ:

Կարգը գալով Քաղաքային ատենի ընտրութեան, Ատենապետաց զիւանին կողմէ պատրաստուած յետագայ ցանկը կը հաղորդուի ժողովին ի քուէարկութիւն:

- Կարապետ էֆէնտի Շահպաղեան
- Աղէքսանդր էֆ. Մէրեշի-Գուլի
- Պապի « Պապոսեան
- Սենեքերիմ « Մանուկեան
- Թովմաս « Խորասանճեան

ԳՈՒՓԱՄԱՃՅԱՆ Մ. ԷՖ.— Շնորհակալ եմ Ատենապետաց զիւանին՝ որ այս ցանկը շինեք բերել է. սակայն քուէարկութիւնէ առաջ կը փափաքեմ գիտնալ թէ արդեօք ցանկին մէջ նշանակեալ անձանց յանձնառութիւնն ապահովեալ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ատենապետաց զիւանըն այդպիսի պաշտօն մը չունէր. ուստի միայն արժանաւորաց մէջէն յարմարագոյն դատածներուն ցանկը կը ներկայէ, զոր սրբագրելու ազատ է իւրաքանչիւր երեսփոխան:

Այսու ամենայնիւ կարելի է որ սոյն ընտրելեաց մէջէն ոմանց հետ կանխաւ տեսնուած խօսուած ալ ըլլայ, բայց պաշտօնական գործողութիւն մը չըլլալով այն, չեմք կարող նոցա յանձնառութիւնն ապահովել ժողովիդ:

Այս բացատրութիւնէն յետոյ Քաղաքային ատենի ընտրութեան քուէարկութիւնն ու քուէհամարը կը կատարուի, եւ յետագայ արդիւնքը կ'արտադրէ:

Թիւ քուէարկուաց 51

- Պապի էֆէնտի Պապոսեան քուէ 50
- Աղէքսանդր « Մէրեշի-Գուլի « 48
- Սենեքերիմ « Մանուկեան « 46
- Թովմաս « Խորասանճեան « 45
- Կարապետ « Շահպաղ « 30

Ատենապետ էֆէնտին սոյն արդիւնքը

ձանուցանելով, քուէի կը դնէ ընտրութեան ամբողջութիւնը, զոր ժողովն ընդունելով, վերոյիշեալ հինգ անձինք Քաղաքային ատենի անգամ կը ՀՌՁԱԿՈՒՆ:

Գ.

Խնդիր Հիսար եւ Պոյաճի-գիւղ միացեալ քաղից երեսփոխանական ընտրութեան. — Տեղեկագիր Նախաձեռնութեան դիւանի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրակարգին երրորդ խնդիրն է Հիսար եւ Պոյաճի-գիւղ միացեալ թաղից երեսփոխանական ընտրութեան խնդիրն, որոյ վրայ նախորդ Նախաձեռնութեան զիւանին տեղեկագիրն՝ արդէն 79 ամի բացման Խ. ըզ նիստի ատենագրութեան մէջ արձանագրուած ըլլալով, երեսփոխանք շատոնց իմաստասիրած են դայն. բայց ըստ որում անկէ ի վեր բաւական ժամանակ անցած է, միանգամ եւս կարգալ հարկ է յիշեցնելու համար: Աւստի կը խնդրեմ Ատենապետի էֆէնտիէն որ հաճի ընթեռնուլ:

Ատենապետ էֆէնտին կը կարգայ յիշեալ տեղեկագիրը:

Վսեմափայլ Ատենապետ

Աղղային ժողովոյ

Հիսար եւ Պոյաճի-Գիւղ միացեալ թաղից կողմէ ընտրեալ երեսփոխան Յ. Արշակունի էֆէնտիի հրաժարագիրը պատճառաբանեալ նկատուելով Աղղային ժողովէդ Նախաձեռնութեան Գիւանիս Նախաքննութեան յանձնուեր է, Հոկտեմբեր 5 ի նիստին մէջ:

Յիշեալ հրաժարագրին պարունակութեանը նայելով, Արշակունի էֆէնտին լեւուր է ինչքան իրեր է ընդունել երեսփոխանութեան պաշտօնը, բայց յետոյ ինչքան էս...

Նախոր պատճառներ եւ նկատմանը ունեցել է հրաժարականը խախտելու:

Այս պատճառաբանութիւնն ըստ ինքեան բաւական նիւթ չէր մատակարարել քննութեան, եւ պարզ հրաժարականի գոյնը կուտար գրութեան. սատարելութեամբ որ՝ վիճանակ լուրջ ձեւի մը տակ խմբագրուելու՝ կամայական ձեւ մ'առած էր, իւր ոճին պատճառաւ:

Եւ եթէ Արշակունի էֆէնտիի հրաժարագրին ուրիշ մէկ պարբերութիւնն էր որ աչքն զարկեր եւ քննութեան կարօտ նկատուեր էր, այսինքն այն պարբերութիւնն որով կըսէ թէ Աղղային ժողովն իւր աշխատանքը ստանալու էր իր ժամանակէն, մեզ թուեցաւ որ անուշադրութեամբ սպրդեր են այդ բառերն Արշակունի էֆէնտիի գրչէն. եւ թէ իւր նպատակը՝ քաղաքավարական պարտականութիւն մը կատարելով ժողովիդ շնորհակալութիւն յայտնելէ ուրիշ բան եղած չէ: Ասլա թէ ոչ՝ իւր արժանաւորութիւնն հռչակելու եղած կըլլար Արշակունի էֆէնտին, որ ծիծաղելի էր, եւ մեր իւր խոհականութեանն անպատշաճ անձնագրութիւն մը սպասելու իրաւունք չունէինք:

Այսու ամենայնիւ Նախաձեռնութեան Գիւանս մտածեց հրաժարողէն բացատրութիւն լսել իւր հրաժարման վրայ, զոր խիստ բանաւոր պատճառներու եւ նկատմանց վերագրած էր ինքն. բայց ասոր հարկ չը մնաց: Վասն զի նոյն միջոցին ծննդոց արձանագրութեան քաղուած մը հաղորդեցին Գիւանիս, որ կը ցցունէր թէ Արշակունի էֆէնտին 1852

Յուլիս 3 ին մկրտուած էր, Բերայի եկեղեցւոյն մէջ : Գիււանս այս արձանագրութիւնն յատկապէս ստուգելէ ետեւ, նկատելով որ մեր մէջ սովորութիւն է առանց երկար ատեն անցընելու մկրտել նորածին երախայնեցն, և թէ հետեւաբար Արշակունի էֆէնտին իւր մկրտութեան թուականէն որչափ ալ կանուխ ծնած ըլլար՝ չէր կրնար 1852 տարիէն առաջ ծնած լինիլ և երեսփոխան ընտրուելու համար օրինական տարիքը լրացուցած ըլլալ, ցաւելով տեսաւ որ վարչութեան ծանօթագրին մէջ սխալում մը տեղի ունեցեր է Արշակունի էֆէնտին նկատմամբ, զայն եւս ուրիշ ընտրելոց հետ՝ Սահմանադրութեան 67 և 68 յօդուածոց համաձայն՝ ընտրելութեան հանգամանաց տէր ներկայացնելով և այս պատճառաւ ժողովոյդ ու Գիււանս անօգուտ զբաղմանց տեղի տրուեր է :

Ուրեմն Նախաձեռնութեան Գիււանս ինչպէս դիտել տուած է արդէն՝ Արշակունի էֆէնտին ընտրութեան օրինաւորութեանը նկատմամբ՝ ժողովոյդ Օգոստոս 24 ի նիստին մատուցած տեղեկագրոյն մէջ, կը նկատէ թէ՛ ըստ որում Արշակունի էֆէնտին ծննդեան թուականի մասին ստոյգ տեղեկութիւն մը կուզայ յերեւան, զոր թերեւս ինքն իսկ կ'անգիտանար, և կը հաստատէ թէ Արշակունի էֆէնտին՝ հազիւ ուրեմն քսան և եօթն տարեկան՝ դեռ եւս չունի օրինական տարիք երեսփոխան ըլլալու, նորա ընտրութիւնը բեկեալ է առաջի օրինաց, և հարկ իսկ չկայ իւր հրաժարագրին վրայ խնդիր յուղելու :

Հետեւաբար Ձեր Նախաձեռնութեան Գիււանս կ'եզրակայէ, ի բաց թո-

ղուլ Արշակունի էֆէնտին հրաժարագրը, նորա ընտրութիւնն ըստ օրինի անվաւեր հռչակել և վարչութեան յանձնարարել որ հրաւէր կարգայ Հիսար եւ Պոյաճի-գիւղ միացեալ թաղերունն որ երեսփոխան մ'ընտրելու :

Մնամք յարգանք  
Ատենապետ և Տեղեկաբեր  
Յ. ՄԷՐԵԿԷՄ-ԳՅՈՒԼԻ  
Անդամք  
Մ. Զօպանեան      Մ. Ռաֆայելեան  
14 Դեկտ. 1879  
Կ. Պոլիս

Յետ ընթերցման՝ Ատենապետ էֆէնտին կը հրաւիրէ զերեսփոխանս խօսք անուլ կարգացուած տեղեկագրին վրայ եւ պահ մ'ընդհանուր լուծենէ յետոյ, քուէի կը գնէ տեղեկագրին եզրակացութիւնն որ է .

«Նախաձեռնութեան գիււանս կեզրակայէ ի բաց թողուլ Արշակունի էֆէնտին հրաժարը, նորա ընտրութիւնն ըստ օրինի անվաւեր հռչակել եւ վարչութեան յանձնարարել որ հրաւէր կարգայ Հիսար եւ Պոյաճի-գիւղ միացեալ թաղերունն նոր երեսփոխան մ'ընտրելու » :

Ժողովը միաձայն կ'ընդունի զայն :

Գ.  
Առաջարկութիւն Ս. Փափագեան Էֆէնտինի ի մասին Ազգային դատարանաց. — Տեղեկագիր Նախաձեռնութեան դիւանի .

Ժողովն Օրակարգի չորրորդ խնդրոյն անցնելով, որ է Փափագեան էֆէնտին առաջարկութիւնն ի մասին ազգային դատարանաց, Ատենապետ էֆէնտին կը յիշեցնէ ժողովին թէ նախորդ Նախաձեռնութեան գիււանս սոյն խնդրոյն վերաբերեալ տեղեկագրին ալ արդէն 79 ամի բացման Ի. բոլոր նիստի ատենադրութեան

մէջ արձանագրեալ է . եւ խօսք կուտայ Ատենապետին էֆէնտին կարգալէզայն, երեսփոխանաց յիշողութիւնը զարթուցանելու համար՝ Ատենապետին էֆէնտին կընթեռնու յիշեալ տեղեկագրին :

Վսեմապատիւ Ատենապետ  
Ազգային Ժողովոյ  
Երեսփոխան Ս. Փափագեան էֆէնտին առաջարկեր է ժողովոյդ որ ազգային երեսփոխանք իրաւունք ունենան վարչութեան Գատաստանական Խորհրդոյն և ազգային դատական ատենաներուն ունկնդիր լինելու, և կեդրոնական հաշուետուները քննելու :

Նախաձեռնութեան գիււանս, որու յանձնուած է այս առաջարկին նախաքննութիւնը, պատիւ ունի ներկայիւս տեղեկագրել իւր կարծիքն առ Ազգային Ժողովդ :

Երեսփոխանք՝ վարչութեան գործոց նկատմամբ ժողովոյդ մէջ ըստ օրինի հարցում և հարցապնդում ընելու կարող ըլլալով վերոյիշեալ կրկին իրաւունքները կը վայելեն արդէն սկզբամբ : Միայն թէ առաջարկութիւնն այդ իրաւանց կիրաւութեան նոր եղանակ մը ցոյց կուտայ : Նկատելով ուրեմն որ՝ ազգային դատական ատենաներն երեսփոխանաց գէմ գոց պահելն՝ ո՛չ երեսփոխանական իրաւասութեան հետ կը համաձայնի և ո՛չ ալ արգարութիւնը կապահովէ :

Նկատելով միւս կողմէ որ՝ ազգային դատական ատենաներու ներկայացեալ խնդիրները պատուոյ վերաբերեալ այնպիսի փափուկ կէտեր կը պարունակեն ստեպ, որոց հրապարակուիլը ծանր անպատեհութիւններ կուսնայ :

Նախաձեռնութեան Գիււանս կը կարծէ թէ՛ պէտք է որ ազգային դա-

տական բոլոր ատենաներն երեսփոխանաց համար բաց ըլլան, բայց դատարանք իրաւունք ունենան՝ հարկ տեսած ատեննին՝ ատենը դռնփակի վերածելու : Կեդրոնական հաշուետու մարաց քննութեան խնդրոյն դալով .

Նախաձեռնութեան գիււանս կը նշկատէ որ՝ ելմտական գործողութեանց հսկողութիւնը կարելոր է : Կը նկատէ միանգամայն որ՝ գանձային գործողութիւնները վարկի առանցքին վրայ դառնալով, անոնց համար հանապազօրեայ քննութեան թոյլտուութիւն ընելը՝ կեդրոնական սնտուկին վարկը վստանդի կենթարկէ :

Ուստի կը կարծէ թէ՛ այս երկու կէտերը միանգամայն ապահովելու լաւագոյն միջոցն այն է որ, կեդրոնական սնտուկի կշիռն ու վիճակն ամեն ամսադրուիս ի պաշտօնէ հրատարակուի, և ասով դիւրութիւն ընծայուի երեսփոխանաց՝ ազգային ելեւմտից խնդրոյն ի մօտոյ հսկելու :

Հետեւաբար Ձեր Նախաձեռնութեան Գիււանս կեզրակայէ որոշել որ .  
1. Ազգային դատարաններն երեսփոխանաց համար բաց ըլլան .

2. Գատարանք իրաւունք ունենան հարկ տեսած ատեննին ատենը դռնփակի վերածելու .

3. Կեդրոնական սնտուկի կշիռն ու վիճակն ամեն ամսադրուիս հրատարակուի ի պաշտօնէ :

Մնամք խորին յարգանք  
Ատենապետ և Տեղեկաբեր  
Յ. ՄԷՐԵԿԷՄ-ԳՅՈՒԼԻ  
Անդամք  
Մ. Զօպանեան      Մ. Ռաֆայելեան  
1880 Մարտ 1  
Կ. Պոլիս



( Յետ Ընթերցման )

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊՍ. — Դատարաններ ըսելով, հիմա ինչպէս գիտէք՝ Ամուսնական սենեակ կայ, այս սենեակը բաց պահել երեսօխտանաց եւ ժողովրդին առջեւ, լաւ չեմ տեսներ. հոն տեսնուած խնդիրները փափուկ են, եւ հետեւաբար արժան չէ որ դատաւորք զայն բանալու եւ գոցելու իրաւունք ունենան. իսկ Ամուսնական սենեակէն դատ միւսները էրնան բաց մնալ ոչ միայն երեսօխտանաց, այլ բոլոր ժողովրդեան համար ալ :

ԳԱՐԱԳԱՇ Ն. ԷՖ. — Մէկ կողմէ ըսել թէ դատարաններն երեսօխտանաց եւ ժողովրդեան բաց լինին եւ միւս կողմէ ըսել թէ դատարաններն ուղած ատենին իրաւունք ունենան փակել, ասի հակասութիւն մը կերեւնայ ինձ. պէտք է որոշել թէ ո՞ր պարագաներուն մէջ դատաւորք պիտի կրնան փակել :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Տեսրք երեսօխտանք առաջարկութեան մէջ ազգային դատարաններ կըսուի. սակայն մեք ազգային դատարան մէկ հատ միայն գիտեմք, որ ամուսնական խնդիրներով եւ եթ կղբաղի, Ասիէ առաջ իմ բացակայ եղած մէկ նիստին մէջ երեսօխտանի մը կողմէ խօսք մը տեղի ունեցիր է ազգային դատարանին նոր կազմակերպութեան առթիւ, եւ ասիէ հետեւեր է Փափազեան էֆէնտի այդ առաջարկութիւնը. Կուզեմ այս մասին քանի մը խօսքով տեղեկութիւն տալ ժողովին Ազգային դատարանը բաց պահելու առաջարկութիւնն այնպիսի դատեր ունեցող ատեանի մը համար է, որ այդ ներքին օրէնք ունի, եւ անոր անդամներն այդ օրէնքին համաձայն պաշտօն կը վարեն Մեք ալ այդ ճիւղին մէջ պաշտօն ունէինք, եւ քանի մը շրջաններ աւարտած եմք : Ներքին օրինաց մէկ տրամադրութիւնն ալ սա՛ է որ ամուսնական դատերու համար բարոյականի մասին փոխանորդ շնորհաւոր, միայն երբ կարգը նիւթական վէճերու զայ, այն ատեն փոխանորդ կընդունուի : Օրինաց այս տրամադրու-

թիւնը մինչեւ ցարդ դործադրութեան մէջ է. եւ ի՞նչ է պատճառն որ ասանկ օրէնք մը հաստատուեր է Արշալոյսի մէջ. պատճառը յայտնի է. փասն զի ամուսնական խնդիր ըսածք այնպիսի դադանքներ կը պարունակէ, որ զրոսէն ունկնդիր գտնուելը ներելի չէ, եւ նոյն իսկ Դատաստանական Խորհրդոյ անդամները շատ անգամ ականջնին գոցելով մտի՛լ ընելու են : Ուստի զրոսէն որ եւէ մէկուն արտօնութիւն տալ ունկնդիր ըլլալու անհրճարին է :

Գալով թէ ո՞ւստի է ծագած այս ունկնդրութեան առաջարկութիւնն, ինձ կը թուի թէ ժամանակաւ Եղմիրեան Սրբազան խօսք մ'ըրած ըլլալով Դատաստանական Խորհրդոյ վերաբերութեամբ այս ժողովին մէջ եւ կերպիւ իւրիք անվտանգութիւն յայտնելով, ասոր վրայ այս ունկնդրութեան առաջարկն երեւան ելած է :

Եղմիրեան սրբազան ըսած է թէ Դատաստանական Խորհրդոյ մէջ փաստարան գտնուին աղէկ չէ, փասն զի հոն եկած խնդիր մը ազգային տեսակէտով ինչպէս որ պէտք է արնօրինելէ ետեւ, դրան առջեւ ալ ուրիշ ձեւերով անոր մէջ կրնայ մտնել յիշեալ փաստարանը :

Այս խօսքն ըսած ատեն ես Դատաստանական Խորհրդոյ ատենապետ կը գտնուէի :

Յիրաւի ազգային պաշտօններու մէջ զբախուիլ փափաքողներէն չեմ. բայց եթէ ինձի դէմ անվտանգութեան շոյց մ'է այդ, եւ եթէ զեղծում մ'եղած է եւ անկէ յառաջ եկած այդ անվտանգութիւնը, ի՞նչ հարկ կայ այդպիսի շոյցերու, կրնան ուղղակի ամբաստանել զիս, եւ ես ալ պատրաստ եմ դատուելու . . . :

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՖ. — ( ընդմիջելով ) Ներեցէք ատենաքան էֆէնտի, խնդրէն շեղեցաք. ես չեմ կարող թոյլատրել որ անձնականութեան վրայ շարունակէք Ձեր խօսքը, եւ պէտք է ուղղեմ այն սխալը թէ դատարանաց ունկնդրութեան առաջարկը նոր երեւան եկած լինի : Այդ առաջարկութիւնը Ձեր ակնարկած դէպէն շատ հին թուականաւ ըրած է Փափազեան էֆէնտի, ինչպէս քիչ մ'առաջ կարգոցուած տեղեկագրէն ալ կը հասկցուէր :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — ( Շարունակելով ) Իսկ թէ ազգին մէջ փաստարաններու պաշտօն տալը ընդունելի է թէ ոչ, այս անգամ քուէարկուած նոր վարչական կազմութեան դրութիւնը ցոյց տուաւ, երկու փաստարան մէկէն նոր Արշալոյսի մէջ պաշտօնի կոչուեցան, Եղմիրեան Սրբազան ինքն ալ անոնց ամբողջից եղաւ : Այսու հանդերձ Դատաստանական Խորհրդոյ ներքին կանոնադիրը զեղծանելու համար լա՛ւ է փաստաբանները հեռացնել պաշտօնէ քան թէ զրոսէն որ եւ է մէկուն ունկնդրութեան արտօնութիւն տալ, զի ամուսնական դատերու որ եւէ որ ներկայ զբախուիլն անտեղի կը համարիմ :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊՍ. — Անշուշտ իրաւունք պիտի տայք ինձ՝ Ատենապետ էֆէնտի, անձնական դէպի մ'առթիւ եղած զիտողութեան մը համառօտիւ պատասխանելու : Ես ալ զիւանիդ հետ շատ ցաւեցայ, երբ Շահպաղ էֆէնտի առանց երբէք խնդիրն հասկնալու ելաւ պատասխան տալ երեսօխտանի մը կողմէ եղած այն զիտողութեան՝ զոր ատենագրութեան մէջ կարգացեր է : Երբ ազգային Արշալոյսի կազմակերպութեան նոր օրէնքը հոս կը քննուէր, ես իբր երեսօխտան իրաւունք ունէի իմ կարծիքներս յայտնել, եւ գո՛հ եմ որ Ազգային ժողովը իմ այն ըրած զիտողութեանս վրայ հանդիսապէս ընդունեց որ երբ փաստարան մը ազգային դատարանի անգամ է, եւ դատի մը Բ՝ դրան վերաբերեալ ճիւղն ստանձնած, նոյն դատին համար ամբողջութեանս վրայ հանդիսապէս ընդունեց որ երբ վարչական կազմակերպութեան օրէնքին քննութեան առթիւ իմ զիտողութիւնս կրնէի, Դատաստանական Խորհրդոյ արարքը քննադատելու չելայ. թերեւս այն մասին շատ ըսելիքներ կրնայի ունենալ. բայց խնդիրն անոր վրայ չէր :

Գալով ըսեն խնդրոյն, թէ եւ Շահպաղ էֆէնտի կըսէ թէ Ազգային դատարանը մէկ է, բայց մեք այսօր ըստ նոր վարչական դրութեան երբ սենեակ ունիմք կեդրոնական դատարանի համար. իմ առաջարկս է ի բաց առեալ Ամուսնական սենեակն, որուն մէջ այնպիսի

դադանքներ կը գտնուին՝ որոց հրատարակուին աղէկ չէ, ինչպէս Շահպաղ էֆէնտի ալ գիտել տուաւ եւ ես անոր այս զիտողութեան համաձայն եմ, միւս երկուքն՝ այն է Անհատական եւ Արշալոյսի սենեակներն ըստ հարկին իրաւունք ունենան դատաւորներն ունկնդրաց բանալու կամ գոցելու. առանց երկարելու կը կրկնեմ իմ այս առաջարկութիւնս :

ԵՊԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Թէպէտեւ զիտաւորութիւնս սկիզբէն անձնական միջազգային վրայ ալ խօսիլ էր, սակայն Մատթէոս եպիսկոպոսի խօսքէն ետեւ իմ խօսելուս հարկ չը մնաց. Մատթէոս եպիսկոպոսի տուած բացատրութենէն հասկցուեցաւ որ իր զիտողութիւնն անձնականի մասին չէ եղեր, ինչպէս կը կարծէր Շահպաղ էֆէնտի :

Բուն խնդրոյն դառնալով յայտնի է որ ամեն երկրի մէջ բոլոր ազգաց փնտուած զիտաւոր բանն արդարութիւնն է, աս այնպիսի բառ մ է որ ամենուն բերանը կը պտըտի, ամենէն քաղաքակրթեալ ազգերէն բռնէ մինչեւ վայրենիներուն մէջ անգամ կը տեսնես որ արդարութիւն բառը բերաննուն չեն ձգեր. բայց քաղաքակրթ ազգաց մէջ արդարութեան գործադրութիւնն ապահովելու համար օրէնքներ դրուած են, ինչպէս մեր երկրին մէջ ալ կայ, եւ վերջին ատեններս դատաւարական եզանակի համար օրինագիրք մ'ալ չինուած է, որուն ուսույլի մուսաբեմէ կըսեն :

Ես կը կարծեմ թէ մեր ազգն ալ որ մինչեւ ցարդ դատաւարական եզանակը սահմանող կանոն մը չէ ունեցած, յետ այսօրիկ պիտի ունենայ եւ իր դատաւարական ընթացքը պիտի կանոնաւորէ. ինչպէս որ Ազգային ժողովըս ալ որ զուրկ էր ներքին կանոնադրութենէ մը, վերջապէս ունեցաւ զայն եւ ըստ այնմ իւր ատենական ընթացքը կանոնաւորեց : Ինձ կը թուի թէ այն երկիրներուն մէջ ուր իրենց դատարանին վճիռներուն օրինաւոր լինելը հասկնալու համար խղճմտանքը բաւական չեն համարիր, կը պահանջուի որ դատարանին դուռը բաց լինի, այսու հանդերձ հոն օ-

բէնքը դատաւորաց ձեռքն իշխանութիւն մ'ալ տուած է, այն է ի պահանջել հարկին դատարանին դուռը փակել, դռնփակի մէջ հարցաքննութիւն կատարել եւ միայն վճիռը դրոշմաբացի մէջ տալ: Ես մէկէն ի մէկ այս կերպով ըմբռնեցի Նախաձեռնութեան դիւանի կողմէն եկած առաջարկը. բայց եթէ միայն երեսփոխանաց համար բաց պիտի ըլլայ դատարանը, ինչո՞ւ ժողովրդեան համար ալ բաց չըլլայ, իրաւ է որ ամուսնական դատեր կան, որոց համար դատարանը դռնփակ պէտք է լինի. շատ երկիրներու մէջ ինչպէս է ի Գաղղիա դատարանին նախագահը պարտաւոր է գեռ երկու կողմը դատի չը հրաւիրուած՝ առանձինն զանոնք լսել, որպէս զի եթէ կարելի լինի, հաշտութիւն հաստատել անոնց մէջ եւ երբ չը յաջողի, այն ատեն դատարանը կը հանէ: Ասի խնդրոյն մասնաւոր մէկ պարագայն է:

Ես կառավարկեմ կարճ խօսքով որ եթէ ժողովը կը հաճի, այս խնդիրը մնայ մինչեւ դատաւարական կանոնաց ծրագրին ներկայացումը Վարչութեան կողմէ, եւ այն ատեն իւր որոշումը ընդունի. իսկ եթէ չը հաճիր յետաձգել, կառավարկեմ որ ազգային դատարաններն առանց բացառութեան բաց ըլլան թէ երեսփոխանաց եւ թէ ժողովրդեան համար, պայմանաւ որ ի պահանջել հարկին դատարաններն իրաւունք ունենան գոցելու, այն ատեն անտարակոյս ամուսնական դատերը յաճախակի գոց ատեանի մէջ կը տեսնուին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Գատարանաց դրոշմաբաց լինելու առաջարկութիւնն ես բերած եմ, եւ կարծեմ թէ անկէ ի վեր երկու տարի անցած է: Գիտէք որ առաջարկութիւնները ժամանակին ներդրութեան տակ կուգան. այն ատեն երբ այս առաջարկը բերի, ազգային դատարանին վրայ վստահութիւնս բարձուած էր, բացարձակապէս կրսեմ զայս. եւ եթէ ես գիտնայի որ ժողովրդեան առջեւ բաց ըլլալն այսօր պիտի ընդունուի, միայն երեսփոխանաց առջեւ բաց ըլլալն չէր առաջարկեր. այլ ըստ որում դատարանին մէջ

ներկայած դատերն յաճախակի ամուսնական դատեր են, ժողովը չխրտեցնելու համար գոնէ երեսփոխանաց առջեւ բաց ըլլալն առաջարկեցի: Եւ ըստ որում ազգային դատարանին մէջ դարձածներուն վրայ շատ խօսքեր կային հասարակութեան եւ լրագրաց մէջ, ուստի թէ՛ ազգը բամբասանքէ աղատելու եւ թէ՛ տուներու կործանման առաջն առնելու համար առաջարկեցի որ գոնէ երեսփոխանք համարառութեան իրաւունքով ներկայանան իբրեւ ունկնդիր, ազգային դատարանի գործողութեանց վրայ հսկեն եւ տեսնեն թէ արդարութիւնն իրօք ի գործ կը գրուի: Բայց հիմա որովհետեւ կրսուի թէ ժողովրդեան համար ալ բաց ըլլայ, եւ որովհետեւ հիմա ազգային դատարանն երեք սենեկի բաժնուած է, ես կը բարեփոխեմ իմ առաջարկութիւնս եւ կրսեմ. «Ազգային դատարանները բաց ըլլան ամենուն համար, պայմանաւ որ դատաւորներն ի հարկին գոցելու արտօնութիւն ունենան, մասնաւորապէս Ամուսնական սենեակը, բայց վճիռներն անպատճառ բաց ատեանի մէջ տրուին, եւ ազգային երեսփոխաններն իրաւունք ունենան դատական արձանագրութիւնները քննելու գոնէ որոշեալ պայմանաժամու մը մէջ»:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ թէեւ կընդունիմ դատարանաց ի հարկին դռնփակ լինելու դրութիւնը, զի ամուսնական դատերու բնութիւնը կը պահանջէ դռնփակ նիստի մէջ կատարել, սակայն կէտ մը կայ, որուն վրայ ժողովին ուշադրութիւնը հրաւիրել կը պարտաւորիմ. ամեն կին կարող չէ իր դատը պաշտպանել, եւ փոխանորդի մը կը կարօտի, առանց որոյ կրնայ իր դատը կորուսանել: Բայց մեր Գատական խորհուրդը փոխանորդ չընդունելու որոշում ընելով ամուսնական դատերու մէջ փոխանորդի ներկայութիւնը կը մերժէ. այսպիսի որոշում մը հակասական կերեւի ինձ. այս կերպով շատ իրաւունքներ կը կորսուին եւ կորսուած ալ են. ընդհակառակն մեք ամեն պէտք եղած դրութիւնները ցոյց տալու ենք ամուսնական

դատ ունեցողներուն, որ իրաւունքնին չկորսընցնեն. եւ ահա այս դրութիւններէն մէկն է անոնց կողմէ փոխանորդ ընդունուիլը: Ուստի դատարանաց գոց ըլլալու դրութիւնը կընդունիմ պայմանաւ որ փոխանորդ ընդունուի ամուսնական դատերու մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսուողաց առաջին շարքն սպառեցաւ, եւ երկրորդ անգամ խօսք ուղղորդեցի կան. սակայն ասոնց խօսք տալէ առաջ կարեւոր կը համարիմ նախ մինչեւ ցարդ եղած առաջարկութեանց ամփոփումն ընել:

Տէր Մատթէոս եպիսկոպոս ամուսնական սենեկին գաղտնիքներուն դուրս ելնելն անպատեհ դատելով անոր բաց լինելուն հակակարծիք էր: Շահապէ Էֆէնտի ի բաց առեալ անձնական դէպք, նոյն կարծիքը կը հաստատէր, համաձայն Մատթէոս եպիսկոպոսի: Գարաղաչ Էֆէնտի հակասութիւն մը կը նըշմարէր թէեւ դատարանաց բաց եւ միանգամայն գոց լինելուն մէջ, բայց այս կէտն Եուսուֆեան Էֆէնտիի բացատրութեամբ պարզուած կը թուի դիւանին եւ հակասութեան հետքն անհետացած: Իսկ Փափազեան Էֆէնտի իւր առաջարկը պարզաբանելով եւ Եուսուֆեան Էֆէնտիի դիտողութեանց վրայ ժամանակին բերման համաձայն բարեփոխել հարկ համարելով, դատարանաց բաց լինելու դրութիւնը կընդարձակէր եւ մասնաւորաբար Ամուսնական սենեկին համար դատաւորաց ի հարկին գոցելու իրաւունքը կընդունէր, բայց վճիռներն ու արձանագրութիւնները տեսնելու ազատութիւն կը վերընծայէր երեսփոխանաց: Գափամաճեան Էֆէնտի ալ կընդունէր նմանապէս դատարանաց ի հարկին դռնփակ լինելը, բայց կուղէր որ ամուսնական դատերու մէջ փոխանորդ ընդունուի. սակայն այս վերջին կէտը վիճաբանութեան բուն նիւթէն կը տարբերի:

Այս ամենն ամփոփելով, եւ Վարչութեան Ատենապետ Եուսուֆեան Էֆէնտիի պատճառաբանութիւններն եւ ըստ այնմ յետաձգման առաջարկն ի նկատի առնելով, ըստ

որում Վարչութիւնը դատաւարական եղանակի ծրագիր մը պիտի բերէ ժողովիս, ձեր Գիւանը կը կարծէ թէ խնդրոյն իմաստնորէն լուծուիմ սա ձեւով կրնայ լինիլ. այն է նախ՝ Ազգային դատարանաց բաց լինելու դրութիւնն ընդունիլ, եւ երկրորդ՝ դատաւորաց ի հարկին դռնփակ ատեան կազմելու արտօնութիւնը հաստատել. եւ այս երկու սկզբնական կէտերն որոշելէ ետեւ, միւս բոլոր մանրամասնութիւնները վերապահել Վարչութեան բերելիք ծրագրին նկատաւման պահուն. սպասելով անշուշտ որ Վարչութիւնը, ժողովն ընդունուած սոյն կէտերն ուշադրութեան առնելով, ըստ այնմ պիտի պատրաստէ իւր ծրագիրն:

Եթէ կը համաձայնիք այս ձեւին, այն ատեն նախ վիճաբանութեան փակումը եւ յետոյ յիշած երկու սկզբունքներս մի առ մի քուէի պիտի ենթարկեմ:

ՁԱՅՆԵՐ. — Ա յո', Ա յո. Գուէ, Գուէ,

Հետեւապէս Ատենապետ Էֆէնտի նախ վիճաբանութեան փակումը քուէի կը դնէ, որ 7 քուէի դէմ 14 ուղ կը ՆԻՈՒՆՈՒՆԻ:

Յետոյ ժողովոյ քուէին կենթարկէ Ազգային դատարանաց բաց լինելու դրութիւնը՝ զոր ժողովը միաձայնութեամբ կը ՆԻՈՒՆԻ:

Նմանապէս ժողովոյ քուէին կենթարկէ, դատաւորաց ի հարկին դռնփակ ատեան կազմելու արտօնութիւնը, զոր նոյնպէս ժողովը միաձայնութեամբ կը ՆԻՈՒՆԻ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն յանուն ժողովոյ կը խնդրեմ Ազգային վարչութեանն որ դատաւարական օրէնքը ծրագրած ատեն, նըկատողութեան առնու ազգային դատարանաց բաց լինելու դրութեան, եւ դատաւորաց ի հարկին դռնփակ նիստի մէջ դատելու արտօնութեան սկզբունքները, զորս ժողովն այժմ քուէարկեց:

Ընտրութիւն նախարանից զիւաններէն պակասեալ անդամոց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տօքթէօր Ռաֆայէլեան էֆէնտի յերեսփոխանութենէ հրաժարմամբ, զոր ի սկզբան նիստին ընդունեցիք, Գաստիարակութեան զիւանին մէկ անդամը պակասեցաւ: Ուրեմն անոր տեղ Գաստար Զէրազ էֆէնտին կառաջարկէ զիւանս:

Նոյնպէս Հալաճեան էֆէնտին կառաջարկեց զիւանէն հրաժարմամբ՝ յիշեալ զիւանէն պակաս անդամին տեղ Գիւանս Եէմէնիճեան Յակոբ էֆէնտին կառաջարկէ:

Այս երկու ընտրութիւնները զատ զատ քուէի գրուելով, ժողովը կ'ընտրուի եւ կը հաստատուէ զանոնք:

Հրաժարեցուցում

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը յիշէք, երեսփոխան էֆէնտիներ, որ վերջին նիստին որոշում մը տուիք բացակայից համար: Նոյն որոշման համաձայն երրորդ կամ աւելի բացակայութիւն ունեցող երեսփոխանաց յատուկ կոչնագիրը զրկուեցաւ սոյն նիստին համար, եւ իրենց բացակայութեան սահմանը լրացած ըլլալն յիշեցուցուելով, ծանուցուեցաւ որ՝ եթէ այս անգամ ալ բացակայ մնան՝ ըստ օրինի հրաժարեալ պիտի նկատուին: Սոյն ազդագիրն ընդունողներէն այսօր անձամբ չը պատասխանողներուն ցուցակը ձեռքս է աւասիկ զոր պիտի կարդամ:

Ասոնց ամենէն ալ ընկալագիր առնուած է իրենց զրկուած հրաւիրագրոց համար, եւ այդ ընկալագրերն ալ Գիւանիս վրայ են. բաց ի Խ՝ Մանկասարեան էֆէնտիէն, որ գրասենեակը չգտնուելուն համար իւր գրագիրն ընդունելու է հրաւիրագիրն՝ ընկալագիրն ստորագրել տալով յանձնելու պայմանաւ, բայց երբ բարապանն հետեւեալ օրը դացեր ընկալագիրն ուղեր է, պատասխան ընդունելու է թէ՛ հրաւիրագիրը Մանկասարեան էֆէնտիին ձեռքը յանձնուելու է թէ՛ եւ, բայց նա ընկալագիրը չէ ստորագրել:

Նմանապէս Ատոմ էֆէնտի Տէրոյնցի հրաւիրագիրը տանողն ալ չգտնուելով զնա, հրաւիրագիրն իւր ձեռքը հասցնելու համար թաղին եկեղեցւոյն պաշտօնեայնէն միայն յանձնելու եւ ընկալագիրն անոր ստորագրել տուել է:

Իսկ Էսանան Յովհաննէս էֆէնտին ընկալագիր չէ ուղեր ստորագրել, վասն զի նա արդէն հրաժարական մատուցած է ժողովիս, որ թէպէտ չէ ընդունուած, բայց իրեն ալ չէ ծանուցուած: Հետեւաբար Յովհաննէս էֆէնտի ինքզինքն հրաժարեալ գիտէ, եւ այս պատճառաւ իրաւունք ունի ընկալագիր չըստորագրելու:

Ասոնցմէ դատ՝ Մօսկան Միքայէլ, Ալաուլահեան Վիշէն եւ Քըլլըճեան Գէորգ էֆէնտիներուն համար ալ վկայող երեսփոխաններ կան թէ նախընթաց նիստին ներկայ են եղեր, թէ՛ եւ ներկայութեան տուածը չեն ստորագրած:

ՁԱՅՆԵՐ ՁԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԻ: — Այո՛, կը վկայենք որ այդ երեսփոխանները ներկայ էին նախընթաց նիստին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն սկսինք նախ այդ երեք երեսփոխաններէն, իրենց վիճակը ճշդելու համար:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Ներեցէք, կարծեմ խնդրոյն մէջ նուրբ կէտ մը կայ. երեք երեսփոխանաց համար վկայութիւններ կան թէ նախընթաց նիստին ներկայ գտնուած են, թէպէտ եւ ներկայութեան տուածն ստորագրած չեն: Այդ վկայութիւնները թէ՛ եւ կը յարգենք, սակայն խնդիր է հասկնալ թէ Գիւանիս ի՞նչ պէտք է ընէ՝ վկայութեանց թէ՛ ոչ ներկայութեան տուածն ստորագրելու պէտք է հետեւի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիւանը ներկայութեան տուածն քաղեալ ցանկ մը բերել պարտաւոր էր, եւ այս պարտաւորութիւնը

կատարեց. ցանկը բերաւ, եւ անոր վերաբերեալ ծանօթութիւններն հաղորդեց Ձեզ: Այլ եւս ժողովին գործն է՝ խնդրոյն մէջ մի կէտերն՝ իւր որոշմամբ լուծել: Արդ՝ երեք երեսփոխանք կան որք ներկայութեան տուածը չեն ստորագրած, բայց անոնց ներկայութիւնը տեսնողներ կան մեր մէջէն, նախընթաց նիստին: Այս մասին խօսք տալու պատրաստ եմ ուզողներուն:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Անցեալ նիստին մեր նախկին օրէնքը բարեփոխելով՝ բացակայից համար նոր օրէնք մը սահմանեցինք, այսինքն բացակայութեան 3 անգամը 4 ի վերածեցինք, եւ բացակայ երեսփոխանաց վերջին հրաւիրագիրը զրկել որոշեցինք: Յայանի է՝ որ երբ երեսփոխան մը ժողովին գայ, պարտաւոր է ներկայութեան տուածն ստորագրել, զի ոչ ոք կրնայ եկողը չեկողը միտքը պահել: Հիմա ոմանք կը վկայեն թէ այս ինչ կամ այն ինչ երեսփոխանը ներկայ էր, թէ՛ եւ ներկայութեան տուածն մէջ ստորագրութիւն չունի. ես ալ կը հաւատամ այդ վկայութեանց. սակայն թէ որ 2 կամ 3 վկայութեան վրայ երեսփոխան մը հրաժարեալ կամ ոչ հրաժարեալ պիտի համարուի, կարելի է որ ես ալ կամ ուրիշներ երեսնք այսոց համար այդպիսի վկայութիւններ տալ. կարծեմ ազի ընդհանուր սկզբան դէմ է եւ ներելի չէ: Իմ կարածիքս սա է որ եթէ բարեփոխում մը պիտի ընենք, ամենուն համար ընենք եւ չէ թէ մէկ քանիին համար միայն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Անթաղիւղ իսկ թէ ատոնք ներկայ էին եւ չեն ըստօրագրած, սակայն քանի որ Ս. Պատրիարքի կողմէն նամակ կերթայ իրենց թէ այսքան բացակայութիւն ունեցած էք, միթէ պարտաւոր չէին ներկայ գրուի պատասխանելու թէ՛ Սըրբաղան Հայր, Ձեր գրածին մէջ սխալ կայ, մեք ներկայ էինք եւայլն:

Քանի որ ոչ պատասխան կը գրեն եւ ոչ կուգան, այդպիսի երեսփոխաններ թող չ'ունենանք:

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ինչիրն այն մէկ քանի երեսփոխանաց վրայ է, որոնք անցեալ նիստին ներկայ էին հոս, սակայն ներկայութեան տուածն ստորագրել չ'ուցած են, որ ամեն տեղ կրնայ պատահիլ: Ահաւասիկ մեր ընկերներէն մին ալ, որ հիմա եկաւ, մոռցեր էր ներկայութեան տուածն ստորագրել. երբ յիշեցուցինք իրեն՝ ելաւ դտորագրեց: Քրիստոս տուր էֆէնտիին զալով կը պատասխանեմ թէ միթէ չկրնա՞ր ըլլալ որ ատոնք նամակ գրած ըլլան եւ նամակին հոս հասած չըլլայ:

Քանի որ վկայողներ կան այդ 3 երեսփոխանաց համար թէ նախընթաց նիստին ներկայ էին, կարծեմ սխալ է այս վկայութիւնը ընդունուի, եւ եթէ ուրիշ տնօրէնութիւն մ'ալ ընել պէտք ըլլայ, իրենցմէ բացատրութիւն մ'առնուելէ ետեւ կրնայ ըլլալ այդ:

ՁԱՅՆԵՐ. — Բուէ, Բուէ:

Ատենասպետ էֆէնտի նկատելով որ քուէ ձայնողներ կան, վիճաբանութեան փակուելը քուէի կըղնէ որ մեծագոյն մասամբ կ'ընտրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ որ Ձեր քուէով որոշում պիտի տաք, պէտք է Ձեր ուշադրութեան ներկայեմ թէ քուն խնդիրը չորրորդ բացակայութիւն ունեցող երեսփոխանաց ըստ օրինի հրաժարումն է: Բայց զայն քուէարկելէ առաջ, որոշման կարօտ երկու կէտեր կան: Առաջինն է Խաչիկ Մանկասարեան եւ Ատոմ Տէրոյնց էֆէնտիներուն իրենց ընկալագրերն անձամբ ստորագրած չըլլալն. եւ երկրորդն է Միքայէլ Մոսկան, Վիշէն Ապտուլահեան եւ Գէորգ Քըլլըճեան էֆէնտիներուն նրկատմամբ, որոց ստորագրութիւնը չեն երեւիր ներկայութեան տուածն մէջ, նախընթաց նիստին ներկայ գտնուած իրենցն համար ոմանց երեսփոխանաց վկայութիւնը:

Նախ՝ այս վերջին կէտէն պիտի սկսիմ քուէարկութեան դնել:

Ով որ լսուած վկայութեանց վրայ Մոսկան, Ապտուլահեան եւ Քըլլըճեան էֆէնտի

ներն անցեալ նիստին ներկայ կը համարի եւ ոչ բացակայ : իւր ձեռնածից հաւանութիւնն յայտնել բարեհաճի :

14 ձեռք կը բարձրանան : Այլ որ հակառակ Ֆեյնտի ունի եւ յիշեալ երեք երեսփոխաններն , ըստ ներկայութեան տուժարի բացակայ կը համարի : իւր ձեռնածից հաւանութիւնն յայտնել բարեհաճի :

15 ձեռք կը բարձրանայ : Հետեւաբար Ատենապետ էֆէնտի կը յայտարարէ թէ ըստ որոյման ժողովոյ Մ. Մամենան , Վ. Ապուռլլահեան եւ Գ. Քըլըճեան էֆէնտիները նախընթաց նիստէն բացակայ չեն համարուած :

Յետոյ Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ Խաչիկ Մանկասարեան եւ Ատոմ Տէրոյենց էֆէնտիներու ընկալազրի խնդիրն :

Եւ ժողովը չորս քուէի դէմ 12 քուէով յիշեալ երկու երեսփոխանաց կոչնագրերն օրինաւորապէս հաղորդուած կը համարի , եւ զանոնք միւս բացակայ հրաժարելի երեսփոխանաց կարգին մէջ կընդունի :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտի ժողովին կը ներկայէ չորրորդ բացակայութեամբ հրաժարելի վիճակ ստացած 13 երեսփոխանաց ցանկն որք են՝

- Տ. Ներսէս վարդապետ Աւանեան
- Խաչիկ էֆէնտի Մանկասարեան
- Ատոմ « Տէրոյենց
- Աւետիս « Կիրառեան
- Անդրանիկ պէյ Կրճիկեան

- Սիմոն պէյ Մաքսուտեան
- Սէրփիլէն էֆէնտի
- Կարապետ « Շահպաղեան
- Պօղոս « Մկրտիչեան
- Յովհաննէս « Կրճիկեան
- Սարգիս « Աբրահամեան
- Աւետիս « Պարոնեան
- Տիգրան « Տ. Ներսէսեան

Ժողովը երկու քուէի դէմ միաձայնութեամբ հրաժարեալ կը ՆԿԱՏԷ ըստ օրինի յիշեալ 13 երեսփոխանները :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ Էսայեան Յովհաննէս էֆէնտին , որ ինչպէս ըսի , իւր հրաժարականը մերժուած ըլլալուն նկատմամբ պաշտօնապէս տեղեկութիւն չէ տրուեր իրեն : Դիւանը պիտի փութայ այս կէտը կարգադրել :

Գ. Բացակայութիւնը

Դիւանը կը հաղորդէ ժողովին երրորդ բացակայութիւն ունեցող հետեւեալ երկու երեսփոխանաց անուններն , որք են՝

- Գրիգոր էֆէնտի Պէրպէրեան
- Ռէթէոս « Պէրպէրեան

Եւ կը յարէ թէ այս անգամ ազդազիր պիտի ուղղուի սոցա , ըստ տրամադրութեան օրինաց :

Ատենը կը փակի ժամը 11 ին :

- Ատենաղապիր Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ
- Ատենապետ Յ. ՄԷՐԵԼԷՄ-ԳՈՒԼԻ

# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն նախընթաց Թ. նիստի Ատենագրութեան
2. Բացակայութիւն :
3. Հրաժարականք :
4. Առաջարկութիւն Ս. Փափազեան էֆէնտիի
5. Հարցապնդում Ս. Փափազեան էֆէնտիի :

ՅՐԱԿԱՐԳ

- Ա. Ընտրութիւն Ելմտական Յանձնախմբի .
- Բ. Ընտրութիւն Կրօնային եւ Քաղաքային ատենից .
- Գ. Խնդիր Հիսար եւ Պօյաճի-գիւղ միացեալ թաղից երեսփոխանական ընտրութեան . — Տեղեկագիր նախաձեռնութեան դիւանի .
- Դ. Առաջարկութիւն Ս. Փափազեան էֆէնտիի ի մասին Ազգային դատարանաց . — Տեղեկագիր նախաձեռնութեան դիւանի .

Գին 2 դրոշ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅՄՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ  
Եկեղեցւոյ բանկայը եւ Հայ գրաւաճառաց քով